ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1964 Общественные науки

Ա. Ս. Համբարյան

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԻՍԱՃՈՐՏԱՑՈՒՄՆ ՈՒ ՃՈՐՏԱՑՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ուսուցում են, որ հասարակության զարգացումը տեղի է ունենում զիգզագներով, վերելքներով ու վայրէջքներով, պատմական երևույթների կրկնումներով և զանազան առիթներով մատնանշել են այդ պրոցեսների դրսևորումը որոշ ժողովուրդների մոտ։ Ֆ. Էնգելսը, անդրադառնալով Գերմանիայի միջնադարյան պատմությանը, ցույց է տալիս, որ XIV—XV դդ. քաղաքների զարգացման և կալվածատերերի պահանջների աճի հետևանքով ուժեղանում է գյուղացիության շահագործումը, որին գյուղացիները պատասխանում են մասսայական ապստամբությամբ։ Կալվածատերերը, ճնշելով գյուղացիների ապստամբությունը, XV—XVI դարերում բռնագրավում են նրանց հողերը և նորից ճորտացնում։ «Սկսած այդ մոմենտից,—գրում է Ֆ. Էնգելսը,—գերմանական գյուղացիների մեջ նորից սկսեց ճորտատիրության ընդհանուր տիրապետումը»[1]։

Ֆ. Էնգելսը այդ երևույթն անվանում է «ճորտատիրական իրավունքի երկրորդ հրատարակում» կամ, որ նույնն է ըստ էության, գյուղացիության «երկրորդ ճորտացում»[2]։

Ղեկավարվելով Ֆ. Էնգելսի այդ դրույթով, դեմոկրատական երկրների (Հունգարիայի, Չեխոսլովակիայի և այլն) պատմաբանները վերջին տարիներս բանավիճում էին ինչպես գյուղացիության «երկրորդ ճորտացման» նշանակության, նույնպես էլ նրա շրջանների մասին։ Այդ բանավեճին մասնակցեցին նաև սովետական պատմաբանները։

Ոմանք (օրինակ՝ հունգարացի պատմաբան Պ. Ժ. Պախը) գյուղացիների արտաքսումը հողերից (Bauernlegen) համարում էին կապիտալի նախասկզբնական կուտակման յուրատեսակ եղանակներից մեկը և գտնում էին, որ այն Արևելյան Եվրոպայի երկրների համար եղել է դրական երևույթ[3]։

Մյուսները (օրինակ՝ սովետական պատմաբաններ Ս. Դ. Սկազկինն ու Վ. Մ. Լավրովսկին) նշում էին, որ չնայած գյուղացիների արտաքսումն Արևելյան Եվրոպայում արտաքինից նման էր XVI—XVIII դարերի անգլիական ցանկապատումներին (enelosures), բայց ըստ էության նրանք միանգամայն տարբեր երևույթներ էին։ Եթե Անգլիայում ցանկապատումները կազմում էին կապիտալի նախասկզբնական կուտակման բաղկացուցիչ մասերից մեկը, ապա Արևելյան Եվրոպայում գյուղացիների արտաքսումը ոչ թե ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման հետևանք էր, այլ վերադարձ էր դեպի ֆեոդալիզմի

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XV, стр. 641.
[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XXIV, стр. 599.
[3] *Տե՛ս* «Вопросы истории», 1955, № 2, стр. 69—75.

պրիմիտիվ ձևերը՝ դեպի աշխատավճար ռենտան, դեպի անմիջական արտադրողների շահագործման կոռային ձևերը[4]։

Բանավեճի մասնակիցներից ոմանք, այնուհետև, պնդում էին, որ գյուղացիության «երկրորդ ճորտացումը» տեղի է ունեցել միայն Արևելյան Եվրոպայի երկրներում, իսկ մյուսները գտնում էին, որ այն տեղի է ունեցել բոլոր երկրներում։ Չեխ պատմաբան Ն. Ֆ. Ֆիլոնենկո-Ալեքսեևը նույնիսկ նշում էր, որ գյուղացիության «երկրորդ ճորտացումը» պարտադիր է եղել բոլոր ժողովուրդների համար։ Նա գրում էր. «Երկրորդ ճորտացումը չէր սահմանափակվում միայն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայով, այլ հանդիսացել է զարգացման տենդենցներից մեկը, որը այս կամ այն չափով հատուկ է եղել յուրաքանչյուր երկրին... «ճորտատիրության երկրորդ հրատարակումը» հանդիսանում է հասարակության զարգացման օրինաչափությունը»[5]։

Մենք գտնում ենք, որ իրավացի է Ս. Դ. Սկազկինը, երբ նշում է, որ գյուղացիության «երկրորդ ճորտացումը» ըստ էության տարբերվում էր անգլիական ցանկապատումներից և ոչ թե կապիտալի նախասկզբնական կուտակում էր, այլ վերադարձ դեպի ֆեոդալիզմի նախնական ձևերը։

Ինչ վերաբերում է շրջաններին, ապա չենք կարող համաձայնվել մի կողմից այն պատմաբանների հետ, որոնք գտնում են, թե գյուղացիության «երկրորդ ճորտացումը» տեղի է ունեցել միայն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում, իսկ մյուս կողմից՝ այն պատմաբանների հետ, որոնք գտնում են, որ այն տեղի է ունեցել անխտիր բոլոր երկրներում։

Գյուղացիության «երկրորդ ճորտացումը» պատմականորեն անցած պրոցեսի վերականգնումն ու կրկնումն է, որը պայմանների բերումով կարող է տեղի ունենալ ինչպես միևնույն, նույնպես և տարբեր ժողովուրդների մոտ պատմական տարբեր ժամանակներում։

Աղբյուրների ուսումնասիրությունը մեզ բերեց այն եզրակացության, որ գյուղացիության ճորտացում տեղի է ունեցել նաև Արևմտյան Հայաստանում մասնավորապես XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին։

Փորձենք կոնկրետ փաստերով ցույց տալ այդ և վեր հանենք տեղական առանձնահատկությունները։

Ինչպես հայտնի է, XVI դարում Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Թուրքիայի միջև։ Առաջինը ստացավ Արևելյան, իսկ երկրորդը՝ Արևմտյան Հայաստանը։ 1828—1829 թթ. ռուս-պարսկական պատերազմի շնորհիվ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին և ընդմիշտ ազատվեց տնտեսական դեգրադացիայից, բայց Արևմտյան Հայաստանը մնաց Թուրքիայի տիրապետության տակ՝ պարուրված ֆեոդալական արտադրահարաբերություններով։

Ռազմա-լենային սիստեմը, որ բնորոշ էր Թուրքական ֆեոդալիզմին, լայն տարածում ուներ կայսրության ինչպես այլ շրջաններում, նույնպես և Արևմտյան Հայաստանում։ Գյուղացիների ճնշող մեծամասնությունը գտնվում էր կամ կիսաճորտական, կամ ճորտական վիճակում։ Աղատների թիվը չնչին էր։

---

[4] Տե՛ս «Вопросы истории», 1959, № 8, стр. 100—101.

[5] «Вопросы истории», 1960, № 3, стр. 121.

1834 թ. սուլթան Մահմուդ երկրորդը վերացրեց ռաղմա-լենային հողատիրությունը և այն փոխարինեց կալվածատիրական հողատիրությամբ, իսկ 1840-ական թվականներին նրա հետնորդը բնաջնջեց բազմաթիվ քրդական ցեղապետերի որպես կենտրոնախույս ուժերի, որի հետևանքով զգալի չափով մեծացավ Արևմտյան Հայաստանում ֆեոդալական կախումից ազատ գյուղացիների թիվը։ Խ. Աբովյանը, անդրադառնալով այդ դեպքերին, գրում էր. «Քրիստոնյաները, հատկապես հայ դժբախտ ժողովուրդը և նեստորականները նրանց (իմա՝ քրդական դերեբեյների—Ա. Հ.) ստրուկներն էին բառիս բուն իմաստով... Սակայն վերջին ժամանակները այդ բոլոր չարագործությունները ու սարսափները բարեբախտաբար վերացել են շնորհիվ թուրքական կազմակերպված զինվորական իշխանության, հատկապես շնորհիվ թուրք հերոս Ռաշիդ-փաշայի, որ նրանցից հազարավորներ ոչնչացրեց»[7]։

Հետագա տասնամյակներում թուրքական սուլթանները կարևոր քայլեր կատարեցին ագրարային հարաբերությունների բուրժուական զարգացման ուղղությամբ։ 1858 թ. ապրիլի 21-ին հրատարակված օրենքով թույլ տրվեց գյուղացիներին ազատ կերպով վաճառելու, գրավ դնելու, ժառանգելու կամ նվիրելու իրենց հողակտորները։ 1867 թ. մայիսի 21-ի օրենքով նաև պարտադրեցին գյուղացիներին փրկագնել իրենց հողերը, իսկ 1873 թ. բոլորին առաջարկվեց թափու (կայքագիր) ձեռք բերել։

Իհարկե, թուրքական սուլթանները նպատակ ունեին մի կողմից ամրապնդել կայսրությունը, իսկ մյուս կողմից գումար հավաքել իրենց պարտքերը մարելու համար։ Բայց նրանց միջոցառումները օբյեկտիվորեն ճանապարհ էին հարթում երկրի կապիտալիստական զարգացման համար։

Սակայն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ արևմտահայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, նպատակ ունենալով Ռուսաստանի օգնությամբ ազատվել թուրքական տիրապետությունից, սուլթան Աբդուլ-Համիդը, տարված վրեժխնդրության մոլուցքով, նպատակ դրեց ֆիզիկապես բնաջնջել արևմտահայ ժողովրդին։ Այդ հրեշավոր նպատակն իրագործելու համար նա անհրաժեշտ համարեց ամենից առաջ համալրել ու ամրապնդել ֆեոդալների դասակարգն Արևմտյան Հայաստանում։ Չվստահելով հայ ունևոր վերնախավին, սուլթանը համալրեց ֆեոդալների դասակարգը մահմեդականներով, գերազանցապես քրդերով։

Աբդուլ-Համիդը մի կողմից թույլատրեց նախկին դերեբեյներին կամ նրանց ժառանգներին գնելու ընդարձակ հողեր և դառնալ խոշոր հողատերեր[8], իսկ մյուս կողմից վերադարձրեց Արևմտյան Հայաստան այն դերեբեյներին կամ նրանց ժառանգներին, որոնք Արևմտյան Հայաստանից տակավին 1860—1870-ական, անգամ 1830—1850-ական թվականներին աքսորված էին նախկին սուլթանների կողմից։ 1882 թ. ժամանակակիցներից մեկը գրում էր. «Խալիֆը նորերումս վերադարձրեց Հայաստան այն 64 քուրդ պեյերին, որոնք Աբեդին փաշայի հրամանով կալանավորված էին և Կ. Պոլսում պահվեցան 2 տարի ոչ իբրև կալանավորներ, այլ խալիֆի հյուրեր։ Այս անբացատրելի

---

7 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1958, հ. 8, էջ 248։

8 Տե՛ս Я. Д. Малама, Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской порты, Тифлис, 1876, стр. 3.

ներողամտության շնորհիվ չարագործները վերադարձան յուրյանց բանակատեղին այն նպատակով, որ յուրյանց թշնամիներից վրեժ հանեն և արդեն նորից սկսել են ավազակություններ, կարծես թե ուզում են վճարել տալ այն երկամյա ընդմիջումի համար, որ նոքա անցկացրին խալիֆի պալատում»[9]։

Սակայն Աբդուլ-Համիդը ֆեոդալների դասակարգը ավելի համալրեց համիդիեական գնդեր (կրճատ «համիդիե») ստեղծելու ճանապարհով։ Ճիշտ է, այդ գնդերի ստեղծումն առաջին հերթին հետապնդում էր քաղաքական և ռազմական նպատակներ, բայց այն ուներ նաև սոցիալական նշանակություն։ Սուլթանը հայտարարեց, որ բոլոր այն ցեղապետերը, որոնք իրենց զինվորների հետ միասին կմտնեն համիդիեական գնդերի մեջ, կստանան արտոնություններ (հարկերից ազատում, քաղաքական իշխանություններին չենթարկվել և այլն), ոռճիկ և պարգև։ Երբ ցեղապետերը մտան այդ գնդերի մեջ, սուլթանը խրախուսեց նրանց բռնագրավել գյուղացիների հողերը ու հպատակեցնել նրանց։ Եվ ցեղապետերը մեծ եռանդով արեցին այդ բանը։ Նրանցից յուրաքանչյուրը տիրեց ոչ թե մեկ, այլ մի քանի գյուղեր և իրավապես ձևակերպեց իր անունով։ Վանի ռուսական փոխ-հյուպատոս Ռ. Ի. Տերմենը այդ առթիվ գրում էր. «Համիդիեական գնդերի կազմավորման ժամանակ շատ աշիրեթների (այսինքն՝ ցեղերի—Ա. Հ.) պետերը իրենց անունով գրեցին ռայայի[10] գյուղերը»[11]։

Աբդուլ-Համիդը, ստեղծելով այդ գնդերը, անցավ իր պլանների իրագործմանը։ Նա 1894—1896 թթ. Արևմտյան Հայաստանում կազմակերպեց հայ ժողովրդի կոտորածը։ Թուրքական իշխանությունները և քրդական ցեղապետերը իրենց դուլամներով հարձակվում էին հայկական գյուղերի վրա, հրի ու սրի էին քաշում բնակիչներին և բռնագրավում նրանց շարժական ու անշարժ ունեցվածքը։ Հայ ժողովուրդը դիմեց ինքնապաշտպանության և ցուցաբերեց հերոսական դիմադրություն։ Բայց անհավասար պայքարում նա պարտվեց։

Եվ սուլթանն ու աղաները որպես հաղթողներ կոտորածներից հետո սկսեցին նոր ուժով բռնագրավել հայկական գյուղերի հողերը։ Ըստ Գեղամ Տեր-Կարապետյանի բերած տվյալների, նրանք XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում բռնագրավել են գյուղացիներից հետևյալ տարածությամբ վարելահող (աղյուսակը տե՛ս հաջորդ էջում)[12]։

Իհարկե, ինչպես նշում է Գեղամ Տեր-Կարապետյանը, այդ տվյալները թերի են։ Եթե հնարավոր լիներ բերել լրիվ տվյալները, ապա կպարզվեր, որ աղաների ու բեյերի բռնագրաված հողերն ավելի շատ էին։

Աղաներից շատերը գյուղացիական հողերը բռնագրավելու ճանապարհով ընդարձակեցին իրենց տիրույթները և դարձան խոշոր հողատերեր։ Ա. Մ. Կոլ-

---

9 «Արձագանք», 1882, № 2, էջ 23։

10 Արևմտյան Հայաստանում ռայա էին կոչվում գյուղացիները, հատկապես հայ գյուղացիները, բառացի նշանակում էր հոտ։

11 Р. И. Термен, Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 году, Тифлис, 1910, стр. 146—147.

12 Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 489, օրավարի վերածումը հեկտարի կատարված է Ե. Ղ. Սարգսյանի կողմից, տե՛ս նրա «Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX века», Ереван, 1957, стр. 68.

Վիլայեթները	Բռնագրավված վարելահողերի տարածությունը	
	Օրավարերով	Հեկտարներով
1	2	
Կարնո	100.000	72.000
Խարբերդի	200.000	144.000
Սեբաստիայի	80.000	57.600
Տիգրանակերտի	200.000	144.000
Վանի	100.000	72.000
Բաղեշի	350.000	252.000
Ընդամենը	1.030.000	741.600

յուրակինը նշում էր, որ Քըղիի կազայի Խարաբաշ-դերե նահիեի բոլոր հողերը պատկանում են միայն մեկին՝ Թուրքացած քուրդ Հաջի Սուլեյման աղային, իսկ նույն կազայի Խերդիֆ և Խուջեխ նահիեների հողերը՝ երկուսի՝ Հյուսեին և Էմիր աղաներին[13]։

Կալվածատիրական հողատիրության ընդարձակման պատկերը համարյա այդպիսին էր Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններում՝ Հազրո դաշտում, Մշո սանջակում, Ադլջեվազում, Աբազայում, Հեքյարի շրջաններում, Կարնո, Երզնկայի, Ալաշկերտի սանջակներում, Զարսանջակում և այլ տեղերում։

Թուրքական կառավարության վարած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանը XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին դարձավ ֆեոդալական խոշոր ու միջին հողատիրության երկիր։

Աղաներն ու բեյերը, գյուղացիների հողերը բռնագրավելիս, նրանց մի մասին կոտորեցին։ Այսպես, Էմին փաշան Արճեշում կոտորեց մոտ 5000 հոգի, իսկ Էուբ փաշան Ալաշկերտում՝ 3000 հոգի[14]։

Աղաներն ու բեյերը գյուղացիների մյուս մասին արտաքսեցին իրենց տնից ու տեղից։ Դրա հետևանքով Արևմտյան Հայաստանում մեծ չափերի հասավ հողազուրկ կամ մարաբա գյուղացիների թիվը։ Ըստ մեր ունեցած տվյալների, այն կազմում էր. Տարոնում գյուղացիության մոտ 80%-ը, Խարբերդի կազայում՝ ավելի քան 74%-ը, Բուլանրխում՝ 85%-ը և այլն[15]։ Ա.-Դոն 1909 թ. գրում էր. «Մարաբայությունը որպես ինստիտուտ թեև վաղուց գոյություն ունի Տաճկաստանում, բայց նա առանձին ուժ ստացավ վերջին երեք տասնյակ տարիների ընթացքում տեղի ունեցող հայկական ջարդերի շնորհիվ... Մարաբայությունը մեղ

---

13 Տե՛ս А. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, ч. I, отд. 2-й, стр. 60—61.

14 Տե՛ս, М. П. Роллен Жекмен, Армения, армяне и трактаты, Москва, 1896, стр. 366, «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 24։

15 Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշված աշխատությունը, էջ 385, «Ազատամարտ», 1910, № 359, 1911, № 491։

հետաքրքրող երեք վիլայեթներում (այսինքն՝ Վանի, Բաղեշի և Կարնո—Ա. Հ.) մեծ չափերի է հասել. ճիշտ է, նա ամեն տեղ համահավասար չափով չի զարգացել, բայց ընդհանուր առմամբ ահագին է նրա ծավալը»[16]։

Սակայն Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի ներգրավումը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ ստիպեց աղաներին ու բեյերին շուկայի համար արտադրել գյուղատնտեսական մթերքներ։ Եվ նրանք արտաքսած գյուղացիների մի մասին սկսեցին նորից ամրացնել հողին և շահագործել որպես ճորտեր։ Այդպես վարվեց, օրինակ, Միրզա բեյը Մուշի դաշտի Խարտոս գյուղում, Յուսուֆ աղան՝ Բաղեշի սանջակի Կորվու գյուղում, շեյխ Ջամիլը՝ Բուլանրխի կաղայի Դյապոլան գյուղում և այլն։ Նրանք թույլատրեցին այդ գյուղերի բնակիչներին կրկին հաստատվելու իրենց գյուղերում միայն այն պայմանով, որ աղաներին ճանաչեն իբրև հողատեր, իսկ իրենց՝ որպես «ծառա, մարապա»[17]։ Այդ աղաներն հիշյալ գյուղերի բնակիչներին ստիպում էին վճարել գյուղատնտեսական ու անասնապահական զանազան մթերքներ, դրամ, կատարել անգարիա, այսինքն՝ կոռ և ֆեոդալական այլ պարտավորություններ, իսկ աղջիկ կամ տղա ամուսնացնելիս նրանցից թույլտվություն վերցնել։

Ուշագրավ է, որ տեղական իշխանությունները, ղեկավարվելով սուլթանի ցուցումներով, արգելակում էին գյուղացիների տեղափոխումները։ Այսպես. 1891 թ. Կարնո անգլիական հյուպատոսն իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ առաջ եթե որևէ մեկը ցանկանում էր գնալ արտասահման, փաստաթուղթ ստանալու համար բավական էր ներկայացնել հավատարմագիր՝ համապատասխան հոգևոր պետերի կողմից, իսկ այժմ նա անձնագիր ստանալու համար պարտավոր է ներկայացնել հավատարմագիր նաև իր օկրուգի մահմեդական իշխանություններից[18]։

Նույն բանն էր հաստատում նաև Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը։ 1891 թ. մարտի 22-ին նա գրում էր Կ. Պոլսի ռուսական դեսպանին. «Տեղական իշխանությունները Ալաշկերտի հայերից ոչ մեկին թույլ չեն տալիս հեռանալու սանջակի սահմաններից և նույնիսկ անցնելու մի գյուղից մյուսը։ Ասում են, որ եթե որևէ հայ ճանապարհին ընկնի զաբթիների ձեռքը, նրան ծեծում են, ենթարկում մանրազնին խուզարկության, զանազան հարցաքննության, օրերով քարշ են տալիս տեղից-տեղ, բանտարկում են և անխնա կողոպտում»[19]։

Գյուղացիները, երբ փորձում էին տեղափոխվել քաղաք, ապա իշխանությունները բռնի կերպով նրանց հետ էին վերադարձնում։ Այսպես. 1899 թ. ականատեսներից մեկը Վանից հաղորդում էր. «Շաբաթ մը ի վեր կառավարական հրամանով մը քաղաքս բնակվող գյուղացիները բռնի իրենց գյուղը կղրկվին»[20]։

1907 թ. Կարնո վիլայեթի Սեկյուքլու, Մերդիվիկ, Բլուր, Թուվանջ, Էնակ, Ինարդել և Իգդաձոր գյուղերի բնակիչները, թվով 4355 հոգի, ռուսական ցարին ուղարկած իրենց խնդրագրում նշում էին. «Մենք գտնվում ենք այնպիսի վիճա-

16 Ա.-Դ տ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 278։

17 «Հորիզոն», 1910, փետրվարի 20։

18 Архив внешней политики России, ф. «Политархив», 1889—1894, д. 1630, лл. 90—91.

19 Նույն տեղում, 1889—1894, գ. 1630, թթ. 90—91։

20 «Մշակ», 1899, օգոստոսի 14։

կում, որ մեր գործերով չենք կարող դուրս գալ գյուղից, որպեսզի դնանք քաղաք կամ ուրիշ գյուղ»[21]։

Թուրքական կառավարիչները ինչպես միջնադարում, նույնպես և XIX դարի վերջին և XX դարի սկզբին գյուղացիներին ճորտացնելիս, ոչ թե ամրացնում էին հողատիրոջը, այլ նրան պատկանող գյուղին կամ շրջանին։

Աղաները ու բեյերը երկրի այլ շրջաններում հողազուրկ գյուղացիներին դարձնում էին կիսաճորտեր՝ կապիտալային վարձակալողներ և շահագործում կիսարարության սկզբունքներով։ Անդրանիկը գրում էր. «Չարսանջակի 60 գյուղերը, որոնց մեջ հայ և քուրդ ազգաբնակությունը խառն կբնակին՝ ընդհանրապես բոլորն ալ մարապա (կիսնորդ) հողագործներ են, որ կվարեն ու կցանեն աղաներու ու պեկերու հողային կալվածքները»[22]։

Պ. Նաթանյանը նշում էր, որ Խարբերդի դաշտում «արտերը տեր ունին, ոմանք երևելի հայոց և ոմանք տաճկաց են։ Մշակողները մարապա կը կոչվին»[23]։

Իհարկե, ճորտատիրությունն էապես տարբերվում է կիսարարությունից, առաջինի ժամանակ գյուղացիության շահագործումը խիստ է, իսկ երկրորդի ժամանակ՝ համեմատաբար մեղմ։ Բայց նրանք երկուսն էլ մնում են ֆեոդալական հասարակության շրջանակներում, քանի որ երկուսի ժամանակ էլ պահպանվում են հողի ֆեոդալական սեփականությունն ու արտատնտեսական հարկադրանքը։ Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ կիսարարությունը «միշտ ենթադրում է վարձվողի անձնական կախումը վարձողից, միշտ ենթադրում է «արտատնտեսական հարկադրանքի» ավելի կամ պակաս չափով պահպանումը»[24]։

Աղաները ու բեյերը, բացի ճորտատիրությունից ու կիսարարությունից, հողազուրկ գյուղացիներին շահագործում էին նաև որպես բատրակներ, այսինքն գյուղական վարձու բանվորներ ու տնային ստրուկներ։ Սակայն նրանք շահագործման այդ ձևերին, մանավանդ ստրկությանը, շատ քիչ էին դիմում։

Եթե հողազուրկ գյուղացիներին աղաները ու բեյերը դարձնում էին ճորտեր, կիսբարներ կամ բատրակներ, ապա ֆեոդալական կախումից ազատ գյուղացիներին դարձնում էին կախյալներ, իսկ կախյալներին՝ ճորտեր։ Ա-Դոն 1896—1908 թվականներին ընկած ժամանակաշրջանը բնութագրում էր որպես լուռ շրջան, որի ընթացքում տեղի ունեցան այնպիսի բռնություններ և հարբսահարումներ, որոնք «միանգամայն մոռացնել տվին նախկինը... Այդ լուռ շրջանում... յուրաքանչյուր գյուղ, ուր մինչ այդ ազատ էր մնացել աղայից կամ բեկից, եկավ այս կամ այն ազդեցիկ քուրդը... և իրեն հայտարարեց այդ գյուղի աղան կամ բեկը... Տարրական սարտականություն դարձավ ձրի վարել, ցանել աղայի հողերը, հնձել արտը, ծեծել ցորենը, դաշտից տուն բերել խոտը»[25]։

Ուշագրավ է, որ աղաներն ու բեյերը ճորտացնում կամ կիսաճորտացնում էին ոչ միայն հայ, այլ նաև քուրդ ու թուրք գյուղացիներին, բայց համեմատա-

---

21 Архив внешней политики России, ф. «Посольство в Константинополе», 1907, д. 2676, л. 43.

22 Անդրանիկ, Տերսիմ, Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, էջ 134։

23 Պ. Նաթանյան, Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուի, Խարբերդու, Չարսանճակի, Ճապաղչուրի և Երզնկայի, Կ. Պոլիս, 1883, էջ 137։

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 239։

25 Ա-Դո, Նշված աշխատություններ, էջ 320—321։

բար քիչ չափերով։ Ռ. Ի. Տերմենը գրում էր, որ Հեքյարում ինչպես քրդերին, նույնպես և ասորիներին «արգելված է ինքնագլուխ անցնելը մեկ աշիրեթից դեպի մյուսը»[26]։ Աղաներն արգելակում էին գյուղացիների տեղափոխումները, փախչողներին հետ էին վերադարձնում, վաճառում ու գնում էին նրանց, անարգում էին անձն ու պատիվը, օգտվում էին առաջին գիշերվա իրավունքից, ծեծում էին և սպանում առանց որևէ մեկի առաջ պատասխան տալու և այլն։ Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը նշում էր, որ Սասունում եթե քրդական ցեղապետը «դժգոհ էր իր հայից, վաճառում է ուրիշին։ Նրա գինն այնքան բարձր է, որքան շատ երեխաներ ունի»[27]։

Ճորտատիրական իրավունքն Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում այնպիսի դաժանությամբ էր արտահայտվում, որ քիչ էր տարբերվում ստրկությունից։

Բայց XIX դարի վերջին քառորդին և XX դարի սկզբին հաստատված ճորտատիրական կարգերն էապես տարբերվում էին նախորդ ժամանակների կամ ավելի ճիշտ՝ միջնադարյան ճորտատիրական կարգերից։ Այդ տարբերությունը երևան էր գալիս թե՛ կալվածատիրական և թե՛ գյուղացիական տնտեսություններում։

Ի տարբերություն նախկին ժամանակների, երբ ֆեոդալական հողատիրության տիրապետող ձևը ռազմա-լենային սիստեմն էր, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կիսաքոչվորական ու քոչվորական ավագանու հողատիրության կողքին արդեն առաջացավ նաև կալվածատիրական հողատիրությունը։ Ճիշտ է, պետությունն առաջվա նման հանդիսանում էր հողի գերագույն սեփականատերը, բայց կալվածատիրական հողատիրության զարգացման պայմաններում նրա այդ իրավունքը ձևական նշանակություն էր ստանում։

Միջնադարում քրդական ֆեոդալական տնտեսությունը ինքնաբավ էր, բայց XIX դարի վերջին և XX դարի սկզբին այն արդեն ներգրավվել էր ապրանք-դրամական հարաբերությունների մեջ։ Աղաների ու բեյերի որոշ մասը մի շարք շրջաններում վաճառում էր գյուղատնտեսական ու անասնապահական մթերքները։ Այսպես. 1887 թ. Վանի ռուսական փոխ-հյուպատոսը հաղորդում էր, որ խոշոր հողատերերը՝ Թեմիր-փաշան և այլոք արտահանում են իրենց և ուրիշներից գնած հացահատիկը դեպի Վանի, Բաղեշի և Մոսուլի վիլայեթները[28]։

1897 թ. «Բյուզանդիոնի» թղթակիցը հետաքրքիր տեղեկություններ էր հաղորդում մի շարք ցեղերի առաջնորդների կողմից մանր եղջյուրավոր անասունների վաճառքի մասին (տե՛ս հաջորդ էջը)[29]։

Այս տվյալները ցույց են տալիս, որ աղյուսակում նշված 8 ցեղերը միայն մեկ տարվա ընթացքում վաճառել են մոտ 84500 գլուխ ոչխար ու գառ։ Թղթակիցը, դժբախտաբար, չի հաղորդում ցեղապետերի ու նրանց ենթակա գյուղացիների վաճառած անասունների գլխաքանակն առանձին-առանձին։ Բայց կասկածից վեր է, որ այդ անասունների զգալի մասը պատկանում էր ցեղապետերին ու նրան շրջապատող ավագանուն։ Աչքի էր ընկնում հատկապես հայդարանցիների առաջնորդ Հյուսեին փաշան, որի մասին Ռ. Ի. Տերմենը հի-

26 Ռ. Ի. Տ ե ր մ ե ն, նշված աշխատություն, էջ 152։

27 Архив внешней политики России, ф. «Политархив», 1889—1894, д. 1630, л. 254.

28 Նույն տեղում, ф. «Посольство в Константинополе», 1887, д. 1573, лл. 6—7.

29 «Բյուզանդիոն», 1897, մարտի 14։

Ցեղերի անունները	Ոչխարների գլխաքանակը	Գառների գլխաքանակը
Հայդարանցի	20.000 գլխ.	25.000 գլխ.
Շավցի	2.000 „	3.000 „
Մուքուրցի	1.600 „	4.500 „
Մլանցի	4.000 „	7.000 „
Թաքուրցի	2.500 „	3.000 „
Շեմակցի	400 „	3.000 „
Մեհմեդբերանցի	—	3.500 „
Շիտանցի	—	5.000 „
Ընդամենը	30.000	54.000

շատակում էր, թե նա «շատ հարուստ է, մեծ առևտուր է անում և ավելի շուտ նման է վաճառականի, քան զինվորի»[30]։

Աղաների ու բեյերի կողմից վաճառած անասունների ու գյուղատնտեսական մթերքների մասին կարելի է շատ տեղեկություններ բերել, բայց բավարարվենք այդքանով։

Ի տարբերություն նախկին ժամանակների, երբ աղաները ֆեոդալական ռենտան ստանում էին համարյա բացառապես մթերքներով, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նրանց որոշ մասն արդեն վարում է տնտեսություն, դիմում է աշխատավճարին և ռենտայի մի մասը, ըստ մեր հաշվումների, 45,3%-ը, ստանում աշխատավճարի ձևով։ 1912 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը գրում էր. «Պետք է նշել, որ վերջին ժամանակներս շատ հողատերեր-միրիներ սկսել են եռանդով զբաղվել հողագործությամբ, բամբակագործությամբ, ծխախոտագործությամբ և բրնձի մշակությամբ, աշխատեցնելով քրիստոնյա ռայա-հայերին, քանի որ քուրդ ռայան անընդունակ է այդ զբաղմունքների համար»[31]։

Միջնադարում գյուղացիական տնտեսությունն ինքնաբավ էր, իսկ XIX դարի վերջին և XX դարի սկզբին այն նույնպես որոշ չափով ներգրավվել էր ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Բայց աղաների ու գյուղացիների համար գյուղատնտեսական մթերքների վաճառքը ուներ տրամագծորեն հակառակ նշանակություն։ Եթե առաջինները վաճառում էին իրենց ավելցուկը՝ տնտեսությունն ավելի ընդարձակելու համար, ապա երկրորդները վաճառում էին իրենց անհրաժեշտը՝ պետական ու տերունական հարկերը վճարելու համար։

Ի տարբերություն նախկին ժամանակների, երբ գյուղացիների շահագործումը համեմատաբար մեղմ էր, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում այն սաստկացավ։ Ականատեսներն ու մամուլի թղթակիցները երկրի տարբեր շրջաններից հաղորդում էին.

---

30 Р. И. Термен, Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1907, стр. 43.

31 Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 71, գ. 73, թ. 68։

Բուլանրխում «կան այնպիսի աղքատներ, որ ցորեն չունենալեն ի զատ մինչև անգամ փսիաթ ալ չունին, որ գիշերը վրան քնին։ Քիչ մը չոր խոտ և իրենց ցերեկվան հանդերձները կը կապմեն անոնց գիշերվան մահիճը»[32]։

Վանի սանջակում 1890-ական թվականներից առաջ կային գյուղացիներ, որոնք հարյուրավոր ոչխարներ էին պահում, «իսկ այժմ 10 հատ անգամ չեն կարող պահել։ Քաղաքի շուրջը գտնված մի քանի գյուղերում, Հայոց-Ձորում, Ռիմարի շրջաններում հարյուրի փոխարեն հինգ ոչխար պահողներ կան»[33]։

Կարնո վիլայեթում «հայ բնակչությունը, որը շատ էր աղքատացել ջարդերի ժամանակ, շարունակում է աղքատանալ ժամ առ ժամ նաև անդադար գործադրվող բռնությունների ու հարստահարությունների հետևանքով»[34]։

Գյուղացիների տնտեսական աղքատացումը ընթանում էր նրանց քաղաքական իրավազրկության սաստկացումով։ Այդ սաստկացումը ահավոր չափերի հասավ հատկապես համիդիեական գնդերի կազմակերպումից հետո, երբ աղաներին տրվեցին մի շարք իրավունքներ։ Գյուղացիները դիպուկ ասում էին. «Համիդիե վար, փատիշահ յոխդուր» (այսինքն՝ «Համիդիեն կա, փադիշահը չկա»)[35]։

XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին զարգացող ճորտատիրությունն ուներ իր առանձնահատկությունները ոչ միայն Արևմտյան Հայաստանի միջնադարյան շրջանի ճորտատիրության, այլև Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրներում տեղի ունեցած գյուղացիության երկրորդ ճորտացման համեմատությամբ։ Եթե վերցնենք Գերմանիան, որպես գյուղացիության երկրորդ ճորտացման կլասիկ երկիր, ապա պետք է նշենք, որ ի տարբերություն Գերմանիայի, որտեղ գյուղացիության երկրորդ ճորտացումը կատարվեց գերազանցապես նրա սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով, Արևմտյան Հայաստանում այն կատարվեց գլխավորապես թուրքական կառավարության վարած ազգային քաղաքականության հետևանքով։ Գերմանիայում գյուղացիության երկրորդ ճորտացումը տեղի ունեցավ բարձրացող կապիտալիզմի ժամանակաշրջանում ու տևեց հարյուրամյակներ, մինչդեռ Արևմտյան Հայաստանում այն տեղի ունեցավ մեռնող կապիտալիզմի—իմպերիալիզմի ժամանակաշրջանում և տևեց տասնամյակներ։

Ինչպես Գերմանիայում, նույնպես և Արևմտյան Հայաստանում ճորտատիրությունն իրավականորեն ձևակերպված էր, բայց ի տարբերություն Գերմանիայի, որտեղ ճորտ գյուղացիներին ամրացրել էին հողատերերին, Արևմտյան Հայաստանում նրանց ամրացրել էին գյուղին կամ շրջանին։

Ուստի դեպ չի կարելի համաձայնվել Ն. Ֆ. Ֆիլոնենկո—Ալեքսեևի հետ, երբ նա գյուղացիության երկրորդ ճորտացման կարևոր հատկանիշների թվին դասում է նաև ճորտատիրության իրավական ձևակերպումը։ Հայտնի է, որ գյուղացիության փաստացի ճորտացումը ոչ միշտ ու ոչ ամենուրեք ընթանում էր նրա իրավական ձևակերպումով։ Օրինակ՝ Ռումինիայում, ինչպես նշում է Կ. Մարքսը, XIX դ. սկզբին ճորտատիրական հարաբերությունները գոյություն ունեին

32 «Արձագանք», 1894, հունվարի 9, № 3։

33 «Մուրճ», 1904, № 4, էջ 27—28։

34 Архив внешней политики России, ф. «Политархив», 1903, д. 1639, л. 108.

35 П. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией. Тифлис, 1900, стр. 278—279.

«միայն փաստորեն, բայց ոչ իրավաբանորեն»[36], իսկ Գերմանիայում, Էլբայի աջ ափին, ինչպես ցույց է տալիս Ֆ. Էնգելսը, XVI դարում գյուղացիները ճորտացվեցին «սկզբում փաստորեն, իսկ հետո նաև իրավապես»[37]։

Գերմանիայում ֆեոդալական հարաբերությունները համեմատաբար ազատ էին նահապետական հարաբերություններից, իսկ Արևմտյան Հայաստանում նրանք ամբողջապես կաշկանդված էին այդ հարաբերություններով։ Ճիշտ է, XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում ճորտատիրական կարգերի զարգացման հետևանքով նահապետական հարաբերությունները նկատելի արագությամբ քայքայվում էին, բայց, այնուամենայնիվ, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը նրանք պահպանվում էին և խաղում էական դեր։

Գերմանիայում կալվածատիրական տնտեսությունները շատ էին ներգրավված ապրանքադրամական հարաբերությունների մեջ, Արևմտյան Հայաստանում նրանք քիչ էին ներգրավված դրանց մեջ։ Այստեղ կային թվով ոչ քիչ աղաներ, որոնց տնտեսություններ տակավին հանդչում էր վաշկատուական անասնապահության վրա։ Գերմանիայում կալվածատերերը վաճառում էին առավելապես գյուղատնտեսական մթերքներ, իսկ Արևմտյան Հայաստանում անասուն և անասնապահական մթերքներ։ Եթե Գերմանիայում անասնապահությամբ զբաղվող կալվածատերերը մասամբ վարում էին ինտենսիվ տնտեսություն, ապա Արևմտյան Հայաստանում նրանք վարում էին բացարձակապես էքստենսիվ տնտեսություն։

Ի տարբերություն Գերմանիայի, որտեղ գյուղացիության երկրորդ ճորտացման ժամանակաշրջանում գերիշխում էր ռենտայի աշխատավճարային ձևը, Արևմտյան Հայաստանում գերիշխում էր նրա արդյունավճարային ձևը։ Ճիշտ է, տնտեսություն վարող աղաների մոտ աշխատավճարային ձևն աճում էր, բայց այդուհանդերձ չհասավ գերիշխման աստիճանի։ Ըստ երևույթին, այդ պետք է բացատրել նրանով, որ Արևմտյան Հայաստանում աղաները անասնապահությամբ ավելի շատ էին զբաղվում, քան գյուղատնտեսությամբ։

Գերմանիայում երկրորդ ճորտացումը տեղի ունեցավ գյուղացիական շարժումների ճնշումից հետո, իսկ Արևմտյան Հայաստանում՝ ազգային-ազատագրական շարժումների ճնշումից հետո։ Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժումները միահյուսվում էին գյուղացիական շարժումների հետ, նպատակ ունենալով լուծել ազգային և ագրարային հարցերը։

Եթե Գերմանիայի վերստին ճորտացված գյուղացիության համարյա յուրաքանչյուր կատեգորիա ուներ իր հատուկ անունը. հողազուրկ գյուղացիները կոչվում էին դրշգարդներ (Dreschgartner), սակավահողները՝ հեուզլեր (Hausler), օրավարձու աշխատողները՝ ինստլեուտե (Instleute) և այլն, ապա Արևմտյան Հայաստանում նրանց մեծ մասն ուներ մեկ ընդհանուր անուն՝ մարարա։

Գերմանիայում գյուղացիների դրությունը ճորտացման հետևանքով վատացավ, իսկ Արևմտյան Հայաստանում այն ավելի վատթարացավ։ Այստեղ գյուղացիների սոցիալական ճնշումը միահյուսվում էր նրանց ազգային ու կրոնական հալածանքներով։

---

36 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 249։

37 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 16, стр. 241.

Բայց, չնայած այդ տարբերություններին, գյուղացիության երկրորդ ճորտացումը ինչպես Գերմանիայում, նույնպես և Արևմտյան Հայաստանում հետադիմական երևույթ էր, քանի որ արգելակում էր արտադրողական ուժերի ու արտադրահարաբերությունների զարգացումը, կաշկանդում էր հասարակության առաջընթացը։ Ֆ. Էնգելսը, խոսելով գերմանական գյուղացիների ճորտացման մասին, գրում էր. «Ճորտատիրական իրավունքի ընդհանուր վերականգնումը հանդիսացավ այն պատճառներից մեկը, թե ինչու Գերմանիայում չկարողացավ զարգանալ արդյունաբերությունը XVII—XVIII դարերում»[38]։

Ճորտատիրական կարգերի վերականգնումն ու զարգացումը դարձավ ոչ միայն Արևմտյան Հայաստանի տնտեսության հետամնացության, այլև արևմտահայ բնակչության ֆիզիկական բնաջնջման գլխավոր պատճառներից մեկը։

А. С. Амбарян

ПОЛУЗАКРЕПОЩЕНИЕ И ЗАКРЕПОЩЕНИЕ КРЕСТЬЯНСТВА В ЗАПАДНОЙ АРМЕНИИ В КОНЦЕ XIX И НАЧАЛЕ XX вв.

Резюме

Западная Армения, которая начиная с XVI века находилась под владычеством Османской Турции, представляла собой феодальную страну. Военно-ленная система была широко распространена повсюду как в Турецкой империи, так и в Западной Армении. Крестьяне находились в основном в крепостном и полукрепостном положении, а свободных крестьян было мало.

В 30—40-х годах XIX века турецкие султаны упразднили военно-ленную систему, в результате чего в Западной Армении в значительной мере увеличилось число свободных крестьян, а в 1850—1870-х годах был проведен ряд мероприятий по направлению буржуазного развития аграрных отношений.

Однако султан Абдул-Гамид не продолжил эти буржуазные начинания. Наоборот, после русско-турецкой войны 1877—1878 гг., поставив перед собой цель—физически уничтожить армянское население—он укрепил феодальные порядки в Западной Армении, организовал гамидовские полки и стал поощрять вождей курдских племен в захвате земель армянских крестьян и порабощении их владельцев. Эти вожди племен с 80-х годов и в особенности после подавления армянского национально-освободительного движения 90-х годов в массовом порядке сгоняли крестьян с земли. Часть крестьян была убита, а другую часть наделили землею и эксплуатировали их как крепостных и полукрепостных. Абдул-Гамид запретил крестьянам переход с места на место. Однако крепостнические порядки, установленные в Западной Армении в конце XIX и начала XX веков, имели свои особенности по сравнению с средневековой Арменией, а также с классическими странами второго издания крепостного права.

---

[38] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 24, ч. I, стр. 600.